իր մանր տերեւներով ծածկում էր նրա հրաշալի քանդակները: Յետոյ դարձաւ դէպի ինձ այդ խօսքերով:

— Ես բերեցի քեզ, Ֆարհատ, այստեղ ոչ թէ ամրոցը ցոյց տալու համար, այլ բոլորովին այլ նպատակով: Մենք ամրոցներ, բերդեր, աւերակներ շատ տեսանք մեր ճանապարհորդութեան ժամանակ: Այնքանն էլ բաւական էր քեզ՝ քո հայրենիքի մասին գաղափար տալու: Բայց ես քեզ բերեցի այստեղ, որ հենց կատարուած տեղի վրայ պատմեմ քեզ այն, ինչ որ մինչեւ այսօր ծածուկ է պահոել քեզանից, ինչ որ գուցէ շատ անգամ զբաղեցրել է քո հարցասիրութիւնը: Այդ պէտք է գիտենաս դու, որովհետեւ մենք շուտով բաժանոելու ենք միմեանցից...

Վերջին խօսքը նետի պէս ծակեց իմ սիրտը: Ես ամբողջ մարմնով սոսկացի: Բաժանոել այն մարդից, որին այնքան սիրել էի, որին այնքան յարգում էի, որը այնքան մեծ ազդեցութիւն էր գործել թէ իմ բնաւորութեան եւ թէ իմ զարգացման վրայ, այդ անտանելի էր: Նա ժամանակ չտոեց ինձ մի բան ասելու եւ շարունակեց.

— Ես թողնում եմ այդ բերդի հին պատմական աւանդութիւնները, թողնում եմ եւ դրա վրայ պատմուած ժողովրդական զրոյցները, այդքանը միայն կասեմ, որ այդ բերդ պատկանում էր Տարօնի հայ իշխաններին, յետոյ կործանոեցաւ Մահմեդի քեռորդի Աբդուռահիմից, երբ նա արշաւեց դէպի Հայաստան: Այնուհետեւ ի՞նչ վիճակների է ենթարկոել, ինձ յայտնի չէ, միայն վերջին ժամանակներում նորոգեց այդ բերդը եւ բնակւում էր դրա մէջ քո եւ մեր ամէնի բարերարը՝ որսորդ Աւօն:

Լսելով Որսորդի անունը, ինձ զսպել չկարողացայ: Ես նստած էի այն ազնիւ, առաքինի մարդու աւերակների վրայ:

— Այդ նրա՞ ամրոցն է, — բացականչեցի ես, — այստե՞ղ կատարոեցաւ այն սարսափելի կոտորածը, որով բնաջինջ եղաւ նրա տունը, այստե՞ղ հայերի դաւաճանութեամբ ընկաւ նա թշնամու սրերի տակ, այդ բոլորը տեսնում եմ, տեսնում եմ եւ հրդեհի հետքերը... բոլորը՛ տեսնում եմ...

— Այո՛, այստեղ... — կրկնեց Ասլանը նոյնպէս զգացուած ձայնով: — Բայց Որսորդի բնակութեան տեղերը նոյնքան փոփոխական են եղել, որքան փոփոխոել է նրա անողորմ բախտը: Մի ժամանակ բնակւում էր նա Սասունի լեռների մէջ, մի ժամանակ՝ Մոգաց երկրում, իսկ վերջը՝ այստեղ: Ամէն տեղ շուտ յաջողւում էր նրան, բայց եւ ամէն տեղ աղէտալի արկածներ պակաս չէին լինում նրանից: Կարծես այդ մարդը ծնուած էր իր ամբողջ կեանքում ծանր պատահարների հետ պատերազմելու համար... Դու գիտես, Ֆար-